

# ԼՈՒՅՍ

Մշակութային և հասարակական ամսագիր

# لويس

LOUYS

*Armenian Monthly*

ISSN 1682-5446

## Իրանում ծածանվող Արցախի դրոշը



# Այս համարում

## Հայերեն բաժին

- 1- Խմբագրական.....0
- 2- Հայաստանի Հանրապետություն.....1
- 3- Արևմտյան Հայաստան.....12
- 4- Միյունք.....13
- 5- Միջազգային.....14
- 6- Մշակույթ.....17

## Պարսկերեն բաժին

Արցախի պատմություն.....0-2

### Շապիկի առաջին էջում՝

Իրանում ծածանվող Արցախի դրոշը

### Վերջին էջում՝ Էդ. Բաղդասարյանի նոր գրքերը

Համար 225, Հունիս 2017 No. 225, July 2017

ماهنامه لويس - شماره ۲۲۵ مرداد ماه ۱۳۹۶

## Մշակույթային և Հասարակական Ամսագիր

### ԼՈՒՅՍ

Արտոնատեր և գլխավոր խմբագիր՝

**Էդ. Բաղդասարյան**

**Խմբագրական կազմ՝**

Թամար Փանոսյան, Վանիկ Բաղդասարյան

Թամ Ղարախանյան, Վաչիկ Վարդանյան

Էմմա Բեգիջանյան, Հովիկ Վարդումյան,

Սաթենիկ Ավետիսյան, Անդրանիկ Խեչումյան

**Փոստարկը 15875-9488 Թեհրան - Իրան**

Էլեկտրոնային փոստ՝ [louys\\_monthly@yahoo.com](mailto:louys_monthly@yahoo.com)

Ինտերնետային հասցեն՝ [www.louysonline.com](http://www.louysonline.com)

### LOUYS

**Armenian Cultural and Social Monthly**

License-holder and Editor-in-Chief

**Edic Baghdasarian**

[www.Edic-Baghdasarian.com](http://www.Edic-Baghdasarian.com)

WEB master: **Baruyr Baghdasarian**

**POBox 15875-9488 Tehran – Iran**

**E-mail : [louys\\_monthly@yahoo.com](mailto:louys_monthly@yahoo.com)**

**Internet : [www.louysonline.com](http://www.louysonline.com)**

Հոդվածների հեղինակների կարծիքները կարող են

չհամընկնել խմբագրության տեսակետներին:

Արտատպության ղեկավար՝ Էդուարդ «ԼՈՒՅՍ» - ին

պարտադիր է:

### ماهنامه لويس

صاحب امتیاز ، مدیر مسئول و سردبیر: ادیک باغداساریان

نشانی نشریه : تهران صندوق پستی ۱۵۸۷۵-۹۴۸۸

پست الکترونیکی: [louys\\_monthly@yahoo.com](mailto:louys_monthly@yahoo.com)

نشانی اینترنت: [www.louysonline.com](http://www.louysonline.com)

## Իրանցի կանայք իրենց երկրում բարձրացրել են Արցախի դրոշը, Բարվում հավանաբար ոռնում են...

Իրանում ծածանվող Արցախի դրոշը

12-07-2017



Իսրայելը օրեր առաջ գենքի վանառք իրականացրեց Ադրբեջանին, որը լայն քննարկման առիթ դարձավ Հայաստանում և Իրանում: Եթե հայկական կողմում մեծամասնություն էր կազմում՝ «դե քիզնես ա, փող ունենանք, մենք էլ կառնենք արտահայտությունը, ապա Իրանը, ով շատ լուրջ կասկածներ ունի, որ Ադրբեջանում գտնվող իսրայելական գենքը կրակելու է Իրանի վրա, միանգամից լուրջ քայլերի գնաց ու ինչ-որ կողմին արդարացնելու և իր մեղքը փնտրելու փոխարեն, փորձում է մեղմել տվյալ հարցի վտանգները:

Չենքի վանառքից օրեր անց Իրանը պաշտոնապես հայտարարեց, որ պատրաստ է համագործակցել Հայաստանի հետ: ԱԺ նախագահների հանդիպման ժամանակ Իրանի ներկայացուցիչը որոշ պայմանավորվածություններ ունեցավ Արա Բարոյանի հետ: Իրանը շատ լավ գիտակցում է, որ հնարավոր ռազմական բախման դեպքում Հայաստանն է իր միակ հարևանը, ում վրա կարող է հույս դնել, քանի որ Հայաստանը ևս գտնվում է ռազմական բախման մեջ, ապա համագործակցությունը փոխշահավետ է երկու կողմի համար:

Չգիտեմ նշված պայմանավորվածությունը ինչ փուլում է, բայց Իրանը ամեն կերպ արտահայտում է իր դիրքորոշումը Հայաստանի հետ հետագա համագործակցության մասին:

Համացանցում արդեն տարածում է գտել Իրանում կատարված լուսանկարը, որտեղ իրանցի կանայք կանգնած են Արցախի դրոշով: Իսկ քաղաքականության, հատկապես ռազմական քաղաքականության մեջ պատահական քայլեր և մեսիջներ չեն լինում:

Ashot Asatryan-ի ֆեյսբուքյան էջից

## Հայաստանի Հանրապետություն

Անհրաժեշտ պահերին մենք կցուցադրենք նոր զենքերի կիրառության արդյունավետությունը. Արծրուն Հովհաննիսյան



Անհրաժեշտ պահերին մենք կցուցադրենք նոր զենքերի կիրառության արդյունավետությունը: Այս մասին ֆեյսբուքյան էջում գրել է ՀՀ ՊՆ մամուլի խոսնակ Արծրուն Հովհաննիսյանը:

«Ադրբեջանական քարոզչության պատվիրատուները կեղծ օգտատերերի հնարած լուրերով մարտական ոգուց խոսելուց հետո հիմա էլ անցել են զենքերի կիրառման մասին միջազգային պայմանագրերին: Փորձում են ադրբեջանցի մայրերին համոզել, որ հայերը ոչ միայն դուխ չունեն, նաև նոր ձեռք բերվող զենքերի կիրառման իրավունքը չունեն: Մույն մոլորյալներին խորհուրդ ենք տալիս, անհատապես դա բացատրել մահացող, բայց թաքցրած, ադրբեջանցի զինվորների ծնողներին: Այն զինվորների որոնք մահանում են հայկական արկերից, հայկական դիպուկահարներից և այլն: Անհրաժեշտ պահերին մենք ինչպես ցույց ենք տվել, այնպես էլ կցուցադրենք նոր զենքերի կիրառության արդյունավետությունը: Փաստաթղթավորումն էլ կլինի այդ արդյունավետության արձագանքները»,- գրել է Արծրուն Հովհաննիսյանը:

## Արցախի նախագահ է ընտրվել Բակո Սահակյանը



Արցախի Ազգային ժողովի հատուկ նիստում այսօր՝ հուլիսի 19-ին, Բակո Սահակյանն ընտրել է հանրապետության նախագահի պաշտոնում:

Ազգային ժողովի հատուկ նիստին մասնակցել է 32 պատգամավոր, որոնցից Բակո Սահակյանի օգտին քվեարկել է 28 պատգամավոր: Մյուս թեկնածուն՝ «Շարժում 88» խմբակցության ղեկավար, Ստեփանակերտի նախկին

քաղաքապետ Էդուարդ Ադաբեկյանի օգտին քվեարկել է 4 պատգամավոր:

Փակ գաղտնի քվեարկության արդյունքները խորհրդարանում հայտարարել է հաշվիչ հանձնաժողովի նախագահ Ռոմելա Դադայանը:

Հիշեցնենք, որ Արցախի նախագահական ընտրություններում առաջադրվել է երկու թեկնածու՝ գործող նախագահ Բակո Սահակյանը և «Շարժում-88» խմբակցության պատգամավոր Էդուարդ Ադաբեկյանը:

ԼԴՀ ԱԺ երեք խմբակցություններ՝ «Հայրենիք», «Ժողովրդավարություն» և «Դաշնակցություն» խմբակցությունները հայտարարել էին, որ սատարում են գործող նախագահ Բակո Սահակյանի թեկնածությունը:

Արցախի նոր Սահմանադրությամբ 2017-2020 թթ. երկրի համար սահմանվել է անցումային ժամանակաշրջան, մինչև Ազգային ժողովի լիազորությունների ժամկետի ավարտը, որից հետո արդեն տեղի կունենան Արցախի նախագահի համապետական ընտրություններ: Այդ ընթացքում երկրի օրենսդրությունն ու կառավարման կարգը պետք է համապատասխանեցվեն նախագահական կառավարման մոդելին:

2020 թ-ին՝ Արցախում անցումային շրջանի ավարտից հետո, համաժողովրդական քվեարկությամբ կընտրվի ինչպես նախագահ, այնպես էլ՝ նոր խորհրդարան: Ընտրությունների նման նախադեպ Արցախում եղել է 1995 թ-ին:

Ըստ այդմ, ընտրված թեկնածուն իր պաշտոնը ստանձնում է գործող նախագահի լիազորությունների ավարտման օրը: Պաշտոնի ստանձնման օրվանից սկսած՝ 20 օրվա ընթացքում, նորընտիր նախագահը պետք է ձեւավորի կառավարություն և հայտարարի կառավարության կազմը՝ ի տարբերության նախորդ հետընտրական զարգացումների, երբ խորհրդարանը մասնակցում էր կառավարության ձեւավորմանը: Կառավարության կազմավորումից հետո 20-օրյա ժամկետում նորընտիր նախագահը հրապարակում է կառավարության գործնեության ծրագիրը:

### Կենսագրություն

Բակո Սահակյանը ծնվել է 1960 թվականի օգոստոսի 30-ին, Ստեփանակերտ քաղաքում:

1977թ. ավարտել է Ստեփանակերտի թիվ 1 միջնակարգ դպրոցը:

1978-80թթ. ծառայել է խորհրդային բանակում:

1981թ. ընդունվել է աշխատանքի Ստեփանակերտի թիվ 9 արտադրական մեքենայացված կոմբինատում՝ որպես փականագործ-մեխանիկ: Աշխատել է Ստեփանակերտի շինանյութերի կոմբինատում՝ որպես քարջարդ բանվոր:

1983-1987թթ. աշխատել է հնությունների վերականգնման գիտական վարչության Ստեփանակերտի մասնաճյուղում՝ որպես վարպետ-ռեստավրատոր:

1987-1990թթ. աշխատել է մատակարարման մարզային վարչությունում՝ որպես մատակարար:

1988 թվականից Արցախյան շարժման առաջամարտիկներից է:

1990 թ. ընդգրկվել է Լեռնային Ղարաբաղի ինքնապաշտպանական ուժերում:

1992-1993թթ. - ԼԴՀ ինքնապաշտպանության կոմիտեի պետի տեղակալ:

1993-1995թթ. - ԼԴՀ ՊԲ թիկունքի շտաբի պետ:

1995-1996թթ. - ԼԴՀ ՊԲ հրամանատարի՝ արտաքին կապերի գծով տեղակալ:



1996-1997թթ. - ԼՂՀ ՊԲ 10-րդ լեռնահրաձգային դիվիզիայի հրամանատարի տեղակալ:

1997-1999թթ. - Հայաստանի Հանրապետության ներքին գործերի եւ ազգային անվտանգության նախարարի օգնական:

1999-2001թթ. - ԼՂՀ ներքին գործերի նախարար:

2001 -2007թթ. - Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ազգային անվտանգության պետվարչության պետ, ԼՂՀ ազգային անվտանգության ծառայության տնօրեն: Ունի գեներալ-մայորի զինվորական կոչում:

2007թ. սեպտեմբերի 7-ից - Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Նախագահ:

Պարգևատրվել է ԼՂՀ «Մարտական խաչ» 1-ին աստիճանի և Ռուսաստանի Դաշնության «Պետրոս Մեծ» 1-ին աստիճանի շքանշաններով, ՀՀ «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» 1-ին աստիճանի, ՀՀ «Վազգեն Սարգսյան» եւ այլ մեդալներով:

Հանդիսանում է Ռուսաստանի Դաշնության անվտանգության, պաշտպանության եւ օրինապահականության հարցերով ակադեմիայի իսկական անդամ:

Ավարտել է Արցախի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետը:

Ամուսնացած է, ունի երկու զավակ:

## Առաջին կիսամյակում Արցախում ծնվել է 1083 երեխա



2017 թվականի առաջին կիսամյակում Արցախում ծնվել է 1083 երեխա, որոնցից 565-ը տղա, 518-ը՝ աղջիկ:

Արցախի Առողջապահության նախարարությունից հայտնում են, որ միայն 870 երեխա ծնվել է Ստեփանակերտի Մոր և մանկան առողջության պահպանման կենտրոնում: Առավելագույն ծնունդներ շրջաններից գրանցվել է Մարտակերտում՝ 96 երեխա:

Վեց ամիսների ընթացքում Արցախում արձանագրվել են 13 զույգեր՝ Ստեփանակերտի Մոր և մանկան առողջության պահպանման կենտրոնում, (բեղմնավորվել են բնական ճանապարհով):

## Հայաստանում սկսել են թողարկել սմարթ – նոթատետրեր

Հայկական TSD ընկերությունը սկսել է սմարթ-նոթատետրեր թողարկել: Նոր սարքի շնորհանդեսի ժամանակ TSD (Technology and Science Dynamics) ընկերության հիմնադիր ու տնօրեն Վահան Շաքարյանը նշել է, որ սարքը հասանելի կդառնա մոտ ժամանակներս EcoPad սարքը միավորում է նոթատետրի ու պլանշետի հատկանիշները: Գրառումներ հնարավոր է անել ջնջվող

գրիչներով, կամ մարկերներով ու մատիտներով, որից հետո ջնջել ռետինով: Գրառումներ կարելի է ջնջել մասամբ կամ ամբողջությամբ՝ նոթատետրը տաքացնելով միկրոալիքային վառարանում կամ էլ ֆենով:



Նոթատետրի «խելացիությունը» Android ու IOS հավելվածների օգնությամբ ամպային համակարգում գրառումները պահելու հնարավորությունն է:

Ըստ սարքը ստեղծողների մտահղացման՝ գրառումները պահպանելու հնարավորության շնորհիվ «կյանքի բոլոր դեպքերի» համար մեկ էլեկտրոնային նոթատետրը կարող է փոխարինել տասնյակ թղթե նոթատետրերի:

## 2017 թվականի 1-ին եռամսյակում Հայաստան է ժամանել 18,2 տոկոսով ավելի շատ զբոսաշրջիկ



2017 թվականի 1-ին եռամսյակում Հայաստան զբոսաշրջային այցելությունները աճել են 18,2 տոկոսով: Այս մասին հուլիսի 19-ին՝ լրագրողների հետ հանդիպման ժամանակ ասաց Տնտեսական զարգացման եւ ներդրումների նախարարության Տուրիզմի պետական կոմիտեի ղեկավար Չարմինե Չեյթունցյանը:

Նրա խոսքով՝ 2017 թվականի առաջին 3 ամիսներին Հայաստան է ժամանել գրեթե 300 հազար զբոսաշրջիկ (298,5 հազար): Ամենամեծ թվով զբոսաշրջիկներ են ժամանել Ռուսաստանից, նաև հարեւան Վրաստանից եւ Իրանից: Միեւնույն ժամանակ, ավելի շատ տուրիստներ են սկսել գալ Հայաստանի համար համեմատաբար նոր ուղղություններից՝ Իրաքից, Ուզբեկստանից եւ Թուրքմենստանից, ինչպես նաև Կանադայից եւ Իսպանիայից: «Հետագոտվում են

«նդկաստանի, Չինաստանի եւ Ճապոնիայի հետ կապեր հաստատելու հնարավորությունները»,- հավելեց նա:

## Բյուրականի աստղադիտարանը կարող է դառնալ գիտական տուրիզմի կարենորագույն կենտրոններից մեկը



Բյուրականի աստղադիտարանը կարող է դառնալ տուրիզմում նոր ուղղության՝ գիտական տուրիզմի կարենորագույն հանգույցներից մեկը, եւ այս նպատակով այստեղ նախատեսվում է հատուկ Այցելությունների կենտրոն ստեղծել: Նման Կենտրոնի ստեղծման նախագիծը այսօր՝ հուլիսի 19-ին, ներկայացվեց Հայաստանի նախագահ Մերժ Սարգսյանին, որն այցելել էր աստղադիտարան:

Լրագրողների հետ գրույցում աստղադիտարանի տնօրեն Արեգ Միքայելյանը հայտնեց, որ գիտական տուրիզմը կարող է ներառել այցելություններ ինչպես ժամանակակից գիտական կենտրոններ, այնպես էլ միջնադարյան համալսարաններ եւ հնագույն աստղադիտարաններ, իսկ Բյուրականի աստղադիտարանը դիտարկվում է որպես Արագածի հարավային լանջին կարենորագույն հանգույց: «Հայաստանում նման կենտրոններ այցելությունը կարգավորված չէ, պատահում է, որ դրանք ընդգրկվում են տուրիստական երթուղիների մեջ, սակայն հատուկ ծրագրեր չկան, չկան նաեւ այս թեմայով հետազոտություններ, մինչդեռ այս առումով Հայաստանը ահռելի հարստություն ունի»,- ասաց նա՝ հավելելով, որ Հայաստանի հիմնական արժեքը դա նվաճումների պատմությունը չէ, որոնք չեն եղել, այլ մեր պատմամշակութային ժառանգությունը:

Արեգ Միքայելյանը նշեց, որ Բյուրականի այցելուների թիվը տարեկան 5 հազար մարդ է կազմում, եւ սա շատ փոքր թիվ է, իսկ հիմնական խնդիրը կենցաղային պայմանների բարելավումն է: Նրա խոսքով՝ աշակերտների, զբոսաշրջիկների եւ այլ այցելուների համար տանելի պայմաններ ստեղծելու համար փոքր ներդրումներ կպահանջվեն, եւ այդ դեպքում, ինչպես հավաստիացնում են տուրիզմի կազմակերպիչները, իրենք աստղադիտարան այցելությունները կընդգրկեն իրենց երթուղիների մեջ, եւ այցելուների թիվը կտրուկ կանի:

Աստղադիտարանի տնօրենը հայտնեց, որ, այսպես կոչված, «աստղային դարպասների» մոտ ծրագրվել է ոչ մեծ կառույց ստեղծել, որտեղ սպասարահ կլինի, հայկական

աստղագիտության պատմության թանգարան, որտեղ հնարավոր կլինի վիրտուալ տեխնոլոգիաների կիրառմամբ ծանոթանալ այս տարածքում աստղագիտական գիտելիքների զարգացման հետ՝ ժայռապատկերներից սկսած մինչեւ մեր օրերը, ինչպես նաեւ դասախոսությունների լսարան: Այցելությունների ծրագրի մեջ կընդգրկվի փոքր աստղադիտակով գիշերային երկնքի դիտումը, մեծ աստղադիտակի հետ ծանոթացումը եւ Վիկտոր Համբարձումյանի թանգարան այցելությունը:

Աստղադիտարանի գիտակրթական դերի ամրապնդման եւ երիտասարդ կադրերի ներգրավման նպատակով առաջարկվում է նաեւ գիտակրթական կենտրոնի ստեղծում՝ հիմնված առկա եւ հեռակա ուսուցման գաղափարի վրա հայկական վիրտուալ աստղադիտարանի օգտագործմամբ: Իսկ վիրտուալ աստղագիտության զարգացման համար Բյուրականի աստղադիտարանը հզոր համակարգչային տեխնիկայի, ժամանակակից կայքի եւ ուսումնական դասընթացների կազմակերպման անհրաժեշտություն ունի: Ինչպես հայտնեց Արեգ Միքայելյանը, այս ամենը նախագահին է ներկայացվել, եւ համաձայնություն է ձեռք բերվել կարճ ժամկետում նրան ավելի մանրամասն ծրագիր ներկայացնելու մասին, որից հետո այն կքննարկվի եւ որոշում կընդունվի:

## «Սուրբ Ներսես Ծնորհալի» շքանշաններ են շնորհվել Կալկաթայի Ս. Նազարեթ եկեղեցու վարչության փոխատենապետերին



Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում՝ Գեւորգյան հոգևոր ճեմարանի հանդիսությունների դահլիճում, հուլիսի 18-ին, Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ-ի բարձր նախագահությամբ տեղի ունեցավ շքանշանների հանձնման արարողություն:

Մայր աթոռից հայտնում են, որ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու «Սուրբ Ներսես Ծնորհալի» պատվո բարձր շքանշան հանձնվեց Կալկաթայի Ս. Նազարեթ եկեղեցու վարչության փոխատենապետեր տիար Սունիլ Սորթիին եւ տիկին Սյուզան Ռուբենին՝ ի գնահատություն նրանց եկեղեցանվեր ընթացքի եւ բազմարդյուն վաստակի:

«Էջ Միածինն ի Հօրե» շարականի երգեցողության ներքո բերվեցին Հայրապետական սրբատառ կոնդակները, որոնք

ընթերցեցին Մայր Աթոռի Վարչա-տնտեսական բաժնի տնօրեն Գերաշնորհ Տ. Մուշեղ եպիսկոպոս Բաբայանը եւ Մայր Աթոռի լուսարարապետ Գերաշնորհ Տ. Հովհաննէս եպիսկոպոս Հակոբյանը:

Ամենայն Հայոց Գարեգին Բ Կաթողիկոսի ձեռամբ շքանշանների շնորհումից հետո տիար Մունիլ Սոթթին եւ տիկին Սյուզան Ռուբենն այս ուրախալի առիթով իրենց երախտագետ զգացումները փոխանցեցին ներկաներին: Մ. Նազարեթ եկեղեցու վարչության փոխատենապետերը հավաստիացրեցին, որ բոլոր ձեռքբերումները հնդկահայոց կյանքում արձանագրվել են շնորհիվ Վեհափառ Հայրապետի զորակցության, ում օրհնությամբ եւ պիտի շարունակեն իրենց ծառայությունը բերել հոգուտ Հնդկաստանի հայ համայնքի, Հայոց Եկեղեցու եւ Հայրենիքի:

Յերեկություն երաժշտական կատարումներով հանդես եկան Մայր Աթոռի եւ ՀԲԸՄ հայորդյաց տների սաները:

Վերջում մեծարյալներին եւ ներկաներին իր օրհնությունը բաշխեց Նորին Սրբություն Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը: Գոհունակություն հայտնելով Եկեղեցու անդաստանից ներս արդյունավոր ծառայություն մատուցող հայորդիների պարզեւատրման առիթով՝ Վեհափառ Հայրապետը նշեց, որ նրանք ավանդապահներն են այն ժառանգության, որ դարերի մեջ Հնդկաստանում կերտել են մեր նախնիները՝ հաստատելով եկեղեցիներ եւ կրթական հաստատություններ: Նորին Սրբությունը գնահատանքով արձանագրեց, որ վերջին տարիներին շնորհիվ Մ. Նազարեթ եկեղեցու վարչության նախանձախնդրության ամբողջովին նորոգվեցին եւ պայծառացան Հնդկաստանում հայոց սրբավայրերը՝ շարունակելով իրենց առաքելությունն այս կյանքում, բարեգաղվեց նաեւ Կալկաթայի Մարդասիրական ճեմարանը: Վերջում, վերստին իր գնահատանքը հայտնելով վարչության անդամներին, Նորին Սրբությունը պատգամեց նույն նախանձախնդրությամբ շարունակել իրենց օգտակար ծառայությունը՝ շաղախված սիրով ու նվիրումով հանդես Հայոց Եկեղեցին, ժողովուրդն ու հայրենիքը:

Հանդիսությունն ամփոփվեց Ամենայն Հայոց Կաթողիկոսի «Պահպանիչ» աղոթքով:

Արարողությանը ներկա էին Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբանները, ՀՀ Սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանը, Հնդկաստանում ՀՀ արտակարգ եւ լիազոր դեսպան Արմեն Մարտիրոսյանը, ՀՀ ԱԳՆ ներկայացուցիչներ եւ Մայր Աթոռի պաշտոնեությունը:

## Շատ ծիծաղելի է, երբ ՌԳ-ն փորձում է վարորդական վկայականը պատճառ բերելով՝ իր լեզուն պարտադրել այլ երկրի. Վազգեն Մանուկյան

Շատ ծիծաղելի է, երբ մի երկիր փորձում է արհեստական ձեւերով, վարորդական իրավունքի վկայականը պատճառ բերելով՝ իր լեզուն պարտադրել այլ երկրի: Այս մասին հայտարարել է Հանրային խորհրդի նախագահ Վազգեն Մանուկյանը՝ մեկնաբանելով ՌԳ Պետդումայի խոսնակ Վյաչեսլավ Վոլոդինի հայտարարությանը, թե Հայաստանում ռուսաց լեզվին պաշտոնական կարգավիճակ տվեք, որ Հայաստանի վարորդական իրավունքի վկայականներն անցնեն Ռուսաստանի տարածքում:

«Ուղղակի ծիծաղելի է: Գիտե՞ք ինչն է զարմանալին. անգլերենը տարածվել է եւ դարձել միջազգային լեզու, եւ օրինակ՝ Հնդկաստանում այն երկրորդ պետական լեզուն է, բայց ոչ որ դա չի պարտադրել, կյանքն է հանգեցրել դրան: Շատ ծիծաղելի է, երբ մի երկիր փորձում է արհեստական ձեւերով, վարորդական իրավունքի վկայականը պատճառ բերելով՝ իր լեզուն պարտադրել այլ երկրի: Չնայած դա հնչել է բարձր պաշտոնատար անձի կողմից, դժվար է դա համարել Ռուսաստանի պաշտոնական կարծիք», - հայտարարեց Վազգեն Մանուկյանը:



Նրա խոսքով, վարորդական իրավունքի վկայականը աշխարհի բոլոր երկրներում կարող եւ օգտագործել. «1949 թվականին Ժնևում ստորագրվեց մի կոնվենցիա, ըստ որի՝ ստորագրող երկրներում գործում է ոչ թե ազգային վարորդական իրավունքը, այլ միջազգայինը: 1968-ին ընդունվեց Վիեննայի կոնվենցիան, որին միացան եւ՝ Ռուսաստանը, եւ՝ Հայաստանը: Ըստ Վիեննայի կոնվենցիայի, յուրաքանչյուր պետության ազգային վարորդական իրավունքը գործում է նաեւ այդ կոնվենցիային միացած մյուս պետություններում: Չնայած այդտեղ որոշ տարբերություններ կան: Օրինակ՝ Բրազիլիան, որը նույնպես ստորագրել է Վիեննայի կոնվենցիան, պարտադրում է, որ ազգային վարորդական իրավունքի վկայականով իր երկիր գնալու դեպքում ունենաս նաեւ նոտարի կողմից թարգմանված եւ հաստատված պատճենը, ինչը նորմալ է, նման որոշ նրբություններ կարող են լինել, բայց դնել պետական հարց, ասել, որ դու պետք է Սահմանադրությունդ փոխես, որ քո վարորդական վկայականն իմ երկրում անցնի, ուղղակի ծիծաղելի է եւ անընդունելի»:

## Մահացել է բանաստեղծ Գուկաս Սիրունյանը



Կյանքի 68-րդ տարում մահացել է Հայաստանի գրողների միության անդամ, գրողների տան գործադիր տնօրեն, ՀՀ ՉՈՒ Կահեստի փոխգնդապետ բանաստեղծ, մանկագիր Գուկաս Սիրունյանը:

Գուկաս Սիրունյանի հոգեհանգիստը հուլիսի 3-ին ժամը 18-00 Կոնդի սուրբ Հովհաննես եկեղեցում: Հուլիսի 4-ին ժամը 11-ին հանգուցյալի աճյունը կղրվի գրողների տանը /Բաղրամյան 3/ , որտեղից ժամը 12-ին սգո թափորը



կուղևորվի Արագածոտնի մարզի Ուջան գյուղ՝ Միրունյանների ընտանեկան գերեզմանոցում թաղումը կատարելու համար:

Ղուկաս Միրունյանը ծնվել է 1949թ. դեկտեմբերի 18-ին Ուջան գյուղում (այժմ՝ ՀՀ Արագածոտնի մարզ):

1971 թվականին ավարտել է Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետը, այնուհետև հայոց լեզու և գրականություն է դասավանդել Սևանի Գեղամավան գյուղի դպրոցում, 1972-1978 թվականներին աշխատել է «Աշտարակ» թերթի խմբագրությունում, 1978-1989 թվականներին՝ «Գարուն» ամսագրի պոեզիայի բաժնի վարիչ: 1989-1992 թվականներին աշխատել է Հայաստանի մշակույթի ֆոնդում, 1992-1993 թվականներին՝ ռադիոհեռուստապետկոմի մանկապատանեկան հաղորդումների գլխավոր խմբագիր, 1993-1994 թվականներին՝ «Ազատամարտ» թերթում, 1996-1997 թվականներին՝ Արագածոտնի մարզային «Կանթեղ» թերթում, 1997-1998 թվականներին՝ «Պարտեզ» մանկական ամսագրի գլխավոր խմբագիր: 1998-2010 թվականներին եղել է ՀՀ պաշտպանության նախարարության լրատվության և քարոզչության վարչության գլխավոր խմբագիր:

Գրել է մեծերի և մանուկների համար: Թարգմանվել է մի քանի լեզուներով: Գրել է նաև կինոսցենարներ: Հեղինակ է ավելի քան 23 գրքերի:

1988թ. «Աստղածաղիկ» մանկական բանաստեղծությունների ժողովածուի համար արժանացել է ՀԳՄ Ստեփան Զորյանի անվան մանկապատանեկան գրականության մրցանակի: 2007թ. «Ուշացած կապիկներ» վեպի համար արժանացել է «Հայր 21-րդ դարասկզբին» գրական մրցանակի: Իսկ 2011թ. «Տառափնջիկ» մանկական ժողովածուն արժանացել է ՀԳՄ Վախթանգ Անանյանի անվան մանկապատանեկան գրականության մրցանակի:

## 2016 թվականին դպրոցականների թիվը Հայաստանում ավելացել է



2016 թվականին դպրոցականների թիվը Հայաստանում ավելացել է 348.6-ից հասնելով 352.6 հազարի: Այս մասին ասված է 2016 թվականի պետքույնի կատարողականի մասին հաշվետվությունում, որը քննարկվում է խորհրդարանական մշտական հանձնաժողովներում:

Դպրոցների թիվը գրեթե նույնն է մնացել (1354՝ 1356-ի փոխարեն): Համապատասխանաբար, նախորդող տարվա համեմատ, կրթության ծախսերը 3.3%-ով ավելացել են՝ հասնելով 75 մլրդ դրամի:

## Արցախի զինուժը վնաս է հասցրել Ադրբեջանի Ալիսանլու գյուղի կրակակետին, հակառակորդն ունի կորուստներ



Հուլիսի 4-ին արցախա-ադրբեջանական հակամարտ գորքերի շփման գծի տարբեր հատվածներում հակառակորդը շարունակել է խախտել հրադադարի պահպանման ռեժիմը: Մասնավորապես, ժամը 11:30-11:35 սահմաններում արևելյան ուղղությամբ ադրբեջանական կողմը կիրառել է 82 միլիմետրանոց ականանետ (4 արկ), նույն հատվածում ժամը 12:45-12:55-ի սահմաններում՝ հաստոցավոր հակատանկային նռնականետ (3 արկ), հարավային ուղղությամբ՝ ժամը 13:35-ին 60 միլիմետրանոց ականանետ (3 արկ), 19:10-ին՝ 60 միլիմետրանոց ականանետ (2 արկ), իսկ 20:20-20:30-ի սահմաններում Ալիսանլու գյուղում տեղակայված ռազմակայանից ադրբեջանական զինուժը ՏՈ-107 տիպի համազարկային հրթիռային կայանքներից (5 արկ) կրակ է բացել հարավային ուղղությամբ գործող գորամասերից մեկի հրամանատարական կետի ուղղությամբ՝ 20:48-ին կիրառելով նաև 82 միլիմետրանոց ականանետ (3 արկ):

Հակառակորդի նախահարձակ ակտիվությունը ճնշելու համար ՊԲ առաջապահ գորամասերը ժամը 20:31-20:40-ի սահմաններում ստիպված եղել ձեռնարկել պատասխան գործողություններ, ինչի արդյունքում վնաս է հասցվել Ալիսանլու գյուղում տեղակայված կրակակետին: ՊԲ համապատասխան ծառայությունների կողմից տրամադրված հավաստի տվյալներով, հակառակորդն ունի կորուստներ:

Ադրբեջանական սադրիչ գործողությունների արդյունքում ՊԲ-ն կորուստներ չի ունեցել:

Կատարվածի հետևանքների ողջ պատասխանատվությունը կրում է Բաքվի ռազմաքաղաքական ղեկավարությունը:

## Էդմոն Մարուքյանը Լորդերի պալատում ներկայացրել է Արցախի խնդիրը եւ առաջարկ արել



«Լուսավոր Հայաստան» կուսակցության նախագահ, ԱԺ «Ելք» խմբակցության պատգամավոր Էդմոն Մարուքյանին Մեծ Բրիտանիայի Լորդերի պալատում ընդունել է Լորդերի պալատի նորընտիր խոսնակ Լորդ Ֆովլերը:

«Լուսավոր Հայաստանից» ն հայտնում են, որ հանդիպման ընթացքում Լորդերի պալատի խոսնակը ներկայացրել է պալատի գործունեությունը, ինչպես նաև խորհրդարանական վերահսկողության բրիտանական պառլամենտարիզմի փորձը: Լորդերի պալատի խոսնակը հետաքրքրվել է «Լուսավոր Հայաստան» կուսակցության, «Ելք» խմբակցության գործունեությամբ, ինչպես նաև Հայաստանի ներքին և արտաքին քաղաքական խնդիրներով:

Հանդիպման ընթացքում Էդմոն Մարուքյանը ներկայացրել է Հայաստանի քաղաքական համակարգի առանձնահատկությունները, արտաքին մարտահրավերները, Արցախի հիմնախնդիրը և դրա կարգավորման վերաբերյալ Հայաստանի տեսլականը:

Էդմոն Մարուքյանը ՀՀ ԱԺ Հայաստան-Մեծ Բրիտանիա խորհրդարանական բարեկամական խմբի շրջանակներում նաև կատարել է համագործակցության առաջարկ, որի արդյունքում կստեղծվեն խորհրդարանական վերահսկողության բրիտանական փորձի փոխանակման հնարավորություններ:

Հիշեցնենք, որ Էդմոն Մարուքյանը Մեծ Բրիտանիայի ԱԳՆ-ի հրավերով գտնվում է Լոնդոնում, որտեղ բազմաթիվ հանդիպումներ է ունենում կառավարության, խորհրդարանի, քաղաքացիական հասարակության, ակադեմիական շրջանակների և քաղաքական ուժերի ներկայացուցիչների հետ:

## Մահացել է ՀՀ ժողովրդական նկարիչ, քանդակագործ Արտաշես Հովսեփյանը



Երեւանում, հուլիսի 6-ին, 86 տարեկանում կյանքից հեռացել է ՀՀ ժողովրդական նկարիչ, քանդակագործ Արտաշես Հովսեփյանը:

ՀՀ մշակույթի նախարարությունից հայտնում են, որ Արտաշես Հովսեփյանի մահվան կապակցությամբ կստեղծվի թաղման կառավարական հանձնաժողով:

## Գնդապետ. Ադրբեջանը պետք է հաշտվի՝ մենք մեր հողերն ենք ազատագրել

Ղարաբաղյան հակամարտության գոտում շփման գծի իրավիճակը կարող է լարվել, քանի որ հակառակորդը որպես կենդանի վահան է արդեն օգտագործում երեխաներին և կանանց: Այս մասին հուլիսի 8-ին՝ լրագրողների հետ հանդիպման ժամանակ հայտարարեց «Հայդուկ» ջոկատի շտաբի պետ, գնդապետ, Արցախյան պատերազմի մասնակից Վիտյա Հակոբյանը:

Նրա խոսքով՝ նրանք թաքնվում են երեխաների, կանանց, խաղաղ բնակչության թիկունքում: «Եթե Ադրբեջանը կարծում է, որ այս պատճառով մենք չպետք է կրակենք և կրակետը ոչնչացնենք, ապա մեծապես սխալվում է: Մենք

մշտապես պետք է զգոն լինենք, քանի որ գործ ունենք անկանխատեսելի և վախկոտ հակառակորդի հետ: Մեր բանակն իր պարտականությունները հրաշալի է կատարում: Մենք մշտապես պետք է ամրապնդենք մեր բանակը», - նշեց Վիտյա Հակոբյանը:




Գնդապետն այնուհետև շարունակեց, որ «ազգ բանակ» հասկացությունը պետք է բարձր մակարդակով իրականացվի: «Մենք չենք կարող հայրենիքին դավաճանել, մենք չենք կարող հողը դավաճանել, սակայն պետք է հիշենք, որ հողեր կան, որոնք պետք է ազատագրել», - ընդգծեց Վիտյա Հակոբյանը:

Դիմելով Ադրբեջանի պաշտպանության նախարար Չաքիր Հասանովին՝ նա խորհուրդ տվեց խելք հավաքել և հասկանալ, որ հայերն իրենցից ոչ մի բան չեն նվաճել: «Մենք մեր հողերն ենք ազատագրել: Նրանք դա ցանկանում են, թե ոչ, պետք է այս մտքի հետ հաշտվեն», - ամփոփեց Հակոբյանը:

## Հայ թագավորների աճյունների գաղտնիքը՝ ի՞նչ են ցույց տվել Աղձքի պեղումները

Առասպելում ասվում է՝ բազմաթիվ արշավանքներից հետո պարսից արքա Շապուհ 2-րդ Մեծին (309-379 թթ) այդպես էլ չի հաջողվում ծնկի բերել Հայաստանը: Նրա քրմերը խորհուրդ են տալիս գողանալ հայ թագավորների աճյունները, որպեսզի երկիրը զրկվի իր ուժից ու պարսիկները հեշտությամբ նվաճեն այն: Պարսից զորքերը շրջանցում են Հայաստանը, հասնում Եփրատի ակունքներին, մինչև Անի Կամախ ու գողանում Արշակունիների աճյունները՝ Արամազդ աստծո հեթանոսական տաճարի դամբարանից:



Հայկական գործերին հաջողվում է ջախջախել պարսիկներին ու վերադարձնել թագավորական աճյունները: Բայց քրիստոնեական Հայաստանում բարդություններ են առաջանում հեթանոսական թագավորների աճյունների հուղարկավորման հարցում՝ հոգևորականությունը դեմ էր, որ դրանք հուղարկավորվեն Սուրբ Վաղարշապատում՝



Էջմիածնում: Այդ ժամանակ, ըստ ավանդույթի, Ադճք ավանում՝ Արագածի ստորոտին, կառուցվում է հատուկ դամբարան՝ զարդանախշ սարկոֆագերով, ու որսորդական տեսարաններ պատկերող որմնաքանդակներով: Ադճքը դարեր շարունակ համարվել է Արշակունիների դամբարանը:

Պեղումներ. Առաջին պեղումները, որոնք իրականացվել են Ադճքում 19-րդ դարում, ոչ մի արդյունք չեն տվել: Դամբարանում թագավորների անյուններ չեն եղել: Թվում էր, թե Շահուպ արքան հասել էր իր նպատակին՝ Հայաստանի մեծ արքաների անյունները անհետ կորել էին, ու դրա հետ մեկտեղ երկիրը զրկվել էր իր գորությունից ու փառքից, նաեւ պետականությունից:



Պեղումների նոր փուլը՝ 2015-2016թթ, ինչպես վստահեցնում է Պատմամշակութային ժառանգության ԳՀԿ-ի փոխտնօրեն, հնագետ Հակոբ Միմոնյանը, լույս է սփռել այդ պատմության վրա, ու առասպելը սկսել է պատմական ուրվագծեր ձեռք բերել: Դամբարանի կողքին գտնվող եկեղեցու սալահատակի տակ հայտնաբերվել են անյուններով երեք անյունատուփեր: Դրանցից մեկի վրա խաչ է, որը վկայում է, որ այդ անյունները թաղվել են արդեն քրիստոնեական ժամանակաշրջանում:

Առասպելից բացի ուրիշ ինչ է վկայում այն մասին, որ արկղերում հայտնաբերված անյունները կարող էին պատկանել հայ թագավորներին: Հակոբ Միմոնյանի խոսքով, նախ բոլոր ոսկորները ջարդված էին ու դա կարող է լինել այն քանի հետեւանքը, որ պարսիկները հապշտապ են դրանք հանել հողից ու իրենց հետ վերցրել: Երկրորդ՝ մարդաբանական հետազոտությունները ցույց են տվել, որ ոսկորները պատկանում են տարբեր սեռերի ու տարիքի անձանց, ինչը վկայում է, որ դա ընտանեկան թաղում է: «Եթե դրանք սրբերի մասունքներ լինեին՝ կլինեին մեծահասակ տղամարդկանց, այլ ոչ թե երեխաների ու կանանց ոսկորներ: Այսինքն պարսիկները դամբարանից առեւանգել են թագավորական ընտանիքների բոլոր անդամների անյունները»,- ասում է նա: Երրորդ, հնագետի խոսքով, այդ անյունատուփերի մեջ հայտնաբերված որոշ ոսկորներ այրված էին, իսկ մենք գիտենք, որ մինչքրիստոնեական ժամանակաշրջանում թագավորների մարմինները դիակիզում էին:

Հակոբ Միմոնյանի խոսքով իր վարկածի օգտին է խոսում նաեւ այն փաստը, որ անյունատուփերը թաղված էին այն ժամանակ արդեն գոյություն ունեցող եկեղեցու խորանի տակ՝ սալահատակը քանդվել էր, տուփերն իջեցվել էին հողի մեջ, հետո նորից քարերը շարվել էին: ԻՆՆՈՒ:

«Պատերազմ էր ընթանում: Հայաստանը պատերազմում էր Սասանյան կայսրության դեմ, որը աշխարհակալ երկրներից էր: Ու ամեն վայրկյան պարսիկները կարող էին նորից փորձել գողանալ ոսկորները: Այսինքն դրանք պետք էր թաքցնել հնարավորինս հուսալի վայրում»,- ասում է գիտնականը ու հավելում, որ հիմնական դամբարանը կառուցվել էր կամ մոլորեցնելու համար, կամ էլ անյունների մի մասը այնտեղ է թաղված: Չնայած սա ընդամենը վարկած է: Ավելի ճշգրիտ տվյալների համար պետք են անյունների լաբորատոր հետազոտություններ ու դրա համար ֆինանսավորում է պետք:

Հակոբ Միմոնյանը մեզ ցույց է տալիս, թե ինչ է հաջողվել գտնել Ադճքում արդեն այս տարվա պեղումների ժամանակ : ՄԻ քանի վաղ քրիստոնեական գերեզմաններ՝ հայերեն գրություններով, թագավորական պալատի, ճեմուղու փլատակեր, որի մեջտեղով հոսում էր Արագած լեռան գագաթից իջնող սառը առվակը: Այդ ամենը, Հակոբ Միմոնյանի խոսքով, խոսում է այն մասին, որ այստեղ վաղ միջնադարում ապրում էին նշանավոր մարդիկ:

## Փորձագետ. Ադրբեջանը սահմանափակումներ չունի ռուսական զենքը հայերի դեմ օգտագործելու համար



Ոչ մի սահմանափակում չկա Ադրբեջանի կողմից Ռուսաստանից գնած զենքի օգտագործման համար, որը կարող է հարվածների ձեւով կիրառվել հայկական կետերի եւ խաղաղ բնակչության դեմ: Այս մասին հուլիսի 11-ին՝ լրագրողների հետ հանդիպման ժամանակ ասաց Հայոց համազգային շարժման վարչության անդամ Հովհաննես Իգիթյանը:

Իգիթյանի խոսքով՝ Ադրբեջանը փորձում է ձեւաչափը փոխել եւ դարաբաղան խնդիրը լուծել՝ հաշվի առնելով ռազմական գործոնը: Ըստ որում ՀՀՇ վարչության անդամը նշեց, որ այս կապակցությամբ Ռուսաստանի դերը մանգամայն բացասական է:

«Հայկական կողմը պետք է ավելի կոշտ լինի, քանի որ Ռուսաստանը ոչ միայն Ադրբեջանին զենք է վաճառում, այլև այնտեղ ռազմական փորձագետների է ուղարկում»,- հայտարարեց Իգիթյանը:

2016 թվականի ապրիլյան թեժացումը, նրա խոսքով, ցույց տվեց, որ ադրբեջանական բանակը չի կարողանաում ռուսական այդ զենքն արդյունավետորեն օգտագործել, եւ սրա հետ կապված կասկածներ է հայտնել իր ձեռք բերած ռուսական զենքի որակի վերաբերյալ: Իսկ Ռուսաստանը, ինչպես նշեց Իգիթյանը, իր հեղինակությունը պաշտպանելու համար ստիպված էր Ադրբեջան ուղարկել իր ռազմական փորձագետներին՝ ադրբեջանցի զինվորականներին սովորեցնելու համար:

Լեւոն Մարտիրոսյանը նշանակվել է Կանադայում ՀՀ դեսպան



ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը հրամանագրեր է ստորագրել, որոնց համաձայն Կանադայում ՀՀ դեսպան Արմեն Եզանյանն ազատվել է պաշտոնից և այդ պաշտոնում նշանակվել է Լեւոն Մարտիրոսյանը: Համապատասխան հրամանագրերում ասվում է. «Ղեկավարվելով 2005 թվականի փոփոխություններով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 55-րդ հոդվածի 8-րդ կետով՝ որոշում եմ.

Արմեն Եզանյանին ազատել Կանադայում Հայաստանի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպանի պաշտոնից»: «Ղեկավարվելով 2005 թվականի փոփոխություններով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 55-րդ հոդվածի 8-րդ կետով՝ որոշում եմ.

Լեւոն Մարտիրոսյանին նշանակել Կանադայում Հայաստանի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան (նստավայրը՝ Օտտավա)»:

Ստորեւ ներկայացնում ենք Լեւոն Մարտիրոսյանի կենսագրությունը.

Ծնվել է 1976թ. փետրվարի 19-ին Երեւանում: 1997-1999թթ. ծառայել է ՀՀ զինված ուժերում: 1997թ. ավարտել է Երևանի պետական համալսարանի իրավաբանական ֆակուլտետը: Իրավագետ: 2002թթ.՝ Մեծ Բրիտանիայի Էսեկսի համալսարանի իրավաբանական ֆակուլտետը: Միջազգային իրավունքի մագիստրոս: Մասնակցել է մի շարք ծրագրերի և դասընթացների՝ Ջոն Սմիթի անվան կրթական ծրագիր երիտասարդ հասարակական-քաղաքական գործիչների համար (2000թ., Մեծ Բրիտանիա), «21-րդ դարի առաջնորդներ» բարձրագույն գործադիր դասընթաց (2003թ., Հարվարդի համալսարանի Ջոն Բենեդու անվան կառավարման դպրոց, ԱՄՆ), Ֆրանսիայի արտաքին գործերի նախարարության «Ապագայի անհատականություն» քաղաքական ծրագիր (2008թ., Ֆրանսիա): 2008թ. ԱՄՆ պետական դեսպարտամենտի հրավերով մասնակցել է ԱՄՆ նախագահի ընտրություններին որպես միջազգային դիտորդ: Զբաղվել է իրավաբանական մասնավոր գործունեությամբ: 2007թ. հուլիսին նշանակվել է ՀՀ վարչապետի օգնական: 2008-2012թթ. եղել է ՀՀ նախագահի օգնական: 2001թ. հիմնադրել է «Երիտասարդ Դեմոկրատների Միություն» ՀԿ-ն, 2003թ.՝ «Բրիտանական Շրջանավարտների Ասոցիացիա» ՀԿ-ն:

2007թ. Միացյալ Ազատական Ազգային կուսակցության (ՄԻԱԿ) համահիմնադիր է, ՄԻԱԿ-ի գլխավոր քարտուղար: Նույն թվականի դեկտեմբերին հրաժարականի դիմումի համաձայն ազատվել է գլխավոր քարտուղարի պաշտոնից: 2007թ. ՄԻԱԿ խորհրդի և քարտուղարության անդամ է:

2012թ. մայիսի 6-ին ՀՀ ԱԺ պատգամավոր է ընտրվել համամասնական ընտրակարգով Հայաստանի Հանրապետական կուսակցությունից:

Ամուսնացած է, ունի երկու զավակ:

Ալեքսանդր Արզումանյանը Դանիայում Հայաստանի դեսպան է նշանակվել



ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի հրամանագրով Հրայա Աղաջանյանն ազատվել է Դանիայի Թագավորությունում և Նորվեգիայի Թագավորությունում Հայաստանի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպանի պաշտոնից:

ՀՀ նախագահի մեկ այլ հրամանագրով Դանիայի Թագավորությունում Հայաստանի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան է նշանակվել Ալեքսանդր Արզումանյանը:

ՀՀ նախագահի հրամանագրերում, մասնավորապես, ասվում է. «Ղեկավարվելով 2005 թվականի փոփոխություններով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 55-րդ հոդվածի 8-րդ կետով՝ որոշում եմ.

Հրայա Աղաջանյանին ազատել Դանիայի Թագավորությունում և Նորվեգիայի Թագավորությունում Հայաստանի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպանի պաշտոնից»:

«Ղեկավարվելով 2005 թվականի փոփոխություններով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 55-րդ հոդվածի 8-րդ կետով՝ որոշում եմ.

Ալեքսանդր Արզումանյանին նշանակել Դանիայի Թագավորությունում Հայաստանի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան (նստավայրը՝ Կոպենհագեն)»:

Ստորեւ ներկայացնում ենք Ալեքսանդր Արզումանյանի կենսագրությունը

Ալեքսանդր Արզումանյանը ծնվել է 1959թ. դեկտեմբերի 24-ին Երևանում:

1986թ. ավարտել է Երևանի պետական համալսարանի մեխանիկամաթեմատիկական ֆակուլտետը: Մինչև 1990թ. Քաղաքի կառավարման ավտոմատացված համակարգերի Երևանի գիտահետազոտական և նախագծային ինստիտուտում (ԲԿԱՀԵՆԻ) աշխատել է ճարտարագետ-ծրագրավորող:

1988-1990թթ. դեկավարել է Հայոց համագգային շարժման լրատվական կենտրոնը, հրատարակել կենտրոնի տեղեկագրերը:

1990-1991թթ. եղել է ՀՀ ԳԻՆ նախագահի օգնական: 1991թ. ՀՀ ԳԻՆ նախագահության և Նախարարների խորհրդի համատեղ որոշմամբ գործուղվել է ԱՄՆ (ՀՀ դիվանագիտական ներկայացուցչություններ հիմնելու նպատակով): 1992-1993թթ. եղել է ԱՄՆ-ում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան:

1992-1996թթ.՝ ՄԱԿ-ում ՀՀ մշտական ներկայացուցիչ: 1996-1998թթ.՝ ՀՀ արտաքին գործերի նախարար: 1988թ-ից մասնակցել է Ղարաբաղյան շարժմանը: 2000-2002թթ. եղել է Հայոց համագգային շարժման վարչության նախագահ:

2001-2004թթ. Հայ-թուրքական հաշտեցման հանձնաժողովի անդամ (հայ և թուրք ականավոր գործիչներից կազմված անկախ խումբ):

2002թ. հուլիսին Հայ-թուրքական հաշտեցման հանձնաժողովի հանձնարարությամբ Նյու Յորքի Անցումային արդարադատության միջազգային կենտրոնը կատարել է Հայոց եղեռնի նկատմամբ ՄԱԿ-ի Յեղասպանության հանցագործության կանխարգելման և պատժման վերաբերյալ կոնվենցիայի կիրառելիության իրավաբանական վերլուծություն: 2002թ. աշխատել է մարդու իրավունքների, ժողովրդավարության, տարածաշրջանային համագործակցության հարցերով զբաղվող ոչ կառավարական կազմակերպություններում: 2008թ. նախագահական ընտրություններում եղել է նախագահի թեկնածու Լևոն Տեր-Պետրոսյանի կենտրոնական նախընտրական շտաբի պետ: 2012թ. մայիսի 6-ին ԱԺ պատգամավոր է ընտրվել համամասնական ընտրակարգով «Ժառանգություն» կուսակցությունից: Ամուսնացած է, ունի մեկ զավակ:

## Մահացել է անվանի ասմունքող և հաղորդավար Վերա Հակոբյանը



Հուլիսի 24-ին 89 տարեկանում կյանքից հեռացել է անվանի ասմունքող և հաղորդավար Վերա Հակոբյանը:

Հոգեհանգիստը տեղի կունենա հուլիսի 25-ին, ժամը 18:00-ից 20:00-ն, Երեւանի Այգեձոր 3 հասցեում:

Վերջին հրաժեշտը՝ հուլիսի 26-ին, ժամը 12:00-ից 13:00-ն, Կոմիտասի անվան կամերային երաժշտության տանը:

Վերա Հակոբյանը ծնվել է 1928 թ.-ին: 1946-1951 թթ. սովորել է Երեւանի թատերական ինստիտուտի դերասանական ֆակուլտետում՝ Արմեն Գուլակյանի արվեստանոցում: Ուսումնառության տարիներին մասնագիտական դասընթացներ է անցել բեմական խոսքի վարպետներ Հրաչուհի Ջիննյանի և Հայկուհի Գարագաշի մոտ: 1951 թվականից աշխատանքի է անցել Հայաստանի ռադիոյի և հեռուստատեսության պետական կոմիտեում: Հաղորդավարական աշխատանքին զուգահեռ զբաղվել է ասմունքով:

1980-ականներին կատարել է սփյուռքահայ բանաստեղծ Մուշեղ Իշխանի բանաստեղծությունները: 1972 թվականից Բելա Դարբինյանի հետ Լիբանան մենահամերգի մեկնելուց հետո պարբերաբար համերգներով հանդես է եկել սփյուռքի հայաշատ համայնքներում՝ տարածելով հայ պոեզիայի շունչն ու բարձր արվեստը: Հայաստանի ազգային ռադիոն, որի հետ կապված է եղել իր ամբողջ աշխատանքային գործունեությունը, նրա երկրորդ տունն է եղել: Նրա անվան հետ է զուգահեռվում «Երեւանն է խոսում» բառակապակցությունը:

## Արցախում առաջիկայում կունենանք ձիթապտղի խոշոր պլանտացիաներ. Արցախի գյուղնախարար

Արցախում առաջիկայում կունենանք ձիթապտղի խոշոր պլանտացիաներ: Այս մասին, այսօր՝ հուլիսի 26-ին, լրագրողների հետ հանդիպման ժամանակ նշել է Արցախի գյուղատնտեսության նախարար Արամ Մխոյանը, հաղորդում է «Արցախպրեսը»:

Նա, մասնավորապես, ներկայացրել է 2016 թվականին գյուղատնտեսության ոլորտում գրանցված հաջողությունները, բացթողումները, ինչպես նաև խոսել ընթացիկ տարվա ձեռքբերումների և անելիքների մասին:

«Արցախի Հանրապետության տարածքում արդեն կան ձիթապտղի փոքր այգիներ. առաջիկայում մենք կունենանք ձիթապտղի խոշոր պլանտացիաներ:


Ձիթապտղի այգիները մեզ կապահովեն, ոչ միայն տեղական բարձրակարգ բուսական յուղով, այլև մենք կունենանք ֆինանսական մեծ հոսքերի հնարավորություններ: Պտղաբուծության մեջ ամենակամուրբեր ճյուղը համարվում է ձիթապտղը: Գյուղատնտեսության հայեցակարգում ունենք պտղաբուծության զարգացման յուրջ ծրագրեր. այնտեղ մեծ տեղ է գրավում ձիթապտղի մշակումը: Ես հավատացած եմ, որ ճիշտ կազմակերպված աշխատանքի շնորհիվ ձիթապտղի այգիները հետագայում կգերազանցեն նոսն այգիներին», -ասել է Ա. Մխոյանը:

Արցախի Հանրապետությունն օգտագործում է մոտավոր 50-60 հազար տոննա հացահատիկ, որի մի մասը, որպես սննդամթերք, մի մասն էլ՝ անասնակեր:

«Արցախում արտադրած հացահատիկի ուղիղ կեսն արտահանում ենք. 20 հազար տոննա արտահանվում է Արցախի գյուղի և գյուղատնտեսության աջակցության հիմնադրամի միջոցով: Սակայն հայտնի է, որ մեր հողօգտագործողները, իրենց անհատական նախաձեռնությամբ իրենք են ուղիղ կապով վաճառք իրականացնում: Ամեն օր հարյուրավոր բեռնատարներ հացահատիկ են տեղափոխում ՀՀ. դրանց իրականացման համար պետությունը հոգում է մի շարք ծախսեր: 60-70 հազար տոննա մենք հացահատիկ ենք արտահանում. բերքի 60-70 տոկոսը եզիպտացորեն է, 50-ը՝ ցորեն ու գարի:

Քանի որ այս տարի մենք ամբարել ենք շուրջ 150 հազար տոննա հացահատիկ, բնականաբար, ավելանալու են նաև արտահանման ծավալները», -ասել է Ա. Մխոյանը:

## Մահացել է արձակագիր և կինոդրամատուրգ Ալեքսան Մեխակյանը



77 տարեկանում մահացել է արձակագիր, կինոդրամատուրգ Ալեքսան Մեխակյանը:

Ալեքսան Մեխակյանն ավարտել է Երեւանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի ժուռնալիստիկայի բաժինը, սպա՝ Մոսկվայի սցենարիստների և ռեժիսորների բարձրագույն դասընթացները: Հեղինակել է մի շարք դրամաներ, սցենարներ՝ գեղարվեստական և դոկումենտալ ֆիլմերի



համար: Կատարել է նաև մի շարք գրքերի թարգմանություններ:

Մասնավորապես, նա հեղինակ է «Երագախար ավետարան», «Փոքրիկ սրնգահարի ողիսականը», «Այաստան» վեպերի: Թարգմանել է Ֆեոդոր Դոստոևսկու, Լաքսնես Հալդորի ստեղծագործություններից: Արժանացել է «Տարվա լավագույն արձակ» մրցանակի:

## «Փաստ». Գուգուշի Երեւանում կայանալիք համերգը հիստերիայի ալիք է բարձրացրել Ադրբեջանում



«Փաստ» օրաթերթը գրում է. «Ադրբեջանական ծագում ունեցող Իրանի ամենահայտնի դերասանուհիներից ու երգչուհիներից մեկը՝ Գուգուշը (քաղաքացիական անունը Ֆաիեզ Աթեշին) Instagram-ի իր էջում գրառում է կատարել օգոստոսի 31-ին Երեւանում կայանալիք համերգի մասին: Երգչուհին իր այդ գրառումը վերնագրել է առանձնացրել է «վերջապես» (#finally) եւ «պատմություն է գրվում» (#historyinthemaking) հեշթեգերով:

Տեղեկացնենք, որ հայտնի երգչուհու այցը Հայաստան մի քանի առումով է հետաքրքիր: Նախ, որ այն հիստերիայի մեծ ալիք է բարձրացրել Ադրբեջանում: 2011-ին, երբ Բաքվում փորձել են կազմակերպել Գուգուշի համերգը, նա հրաժարվել է Ադրբեջան մեկնել առանց իր հայ ընկերոջ, որի պատճառով էլ համերգը չեղյալ է հայտարարվել: Այսինքն, իրանցի արտիստը ազգությամբ հայ զուգընկեր ունենալու պատճառով արդեն իսկ հասցրել է ադրբեջանական սեւ ցուցակում գրանցվել, ինչը նշանակում է, որ այլեւս չի կարող այդ երկիր մեկնել:

Բայց սա, կարծես թե, այնքան է ազդել ադրբեջանական կողմի վրա եւ հիմա էլ սեփականատիրական զգացումից ելնելով մտածում են, որ հայտնի երգչուհին այնուամենայնիվ իրենցն է եւ չի կարող Հայաստանում համերգ տալ:

Ի դեպ, 2000 թվականին ԱՄՆ տեղափոխվելուց հետո սա Գուգուշի առաջին համերգն է նախկին ԽՍՀՄ-ի տարածքում: Հայաստանից հետո, սեպտեմբերի 3-ին երգչուհին ելույթ կունենա նաև Վրաստանի մայրաքաղաքում:

Անշուշտ այս համերգը նշանակալի իրադարձություն է ոչ միայն հայկական շոուբիզնեսի, այլև հանդիսատեսի համար, քանի որ նման հայտնի աստղի ցանկացած ելույթ տարբեր ուղղություններով միանգամից մի քանի շոբայական ռեակցիաներ է առաջացնում: Առավել եւս, երբ նրա իրանցի բազմահազար երկրպագուները այս համերգին ներկա գտնվելու համար պատրաստ են բավականին մեծ գումարներ ծախսել:

Ի դեպ, Մարգահամերգային համալիրում համերգի տոմսի գները սկսվում են 75 դոլարից, իսկ VIP տոմսերի արժեքը 600 դոլար է:

Տեղեկացնենք նաև, որ բացի մշակութային իրադարձությունից Գուգուշի Հայաստան այցը ամենայն հավանականությամբ կդառնա համաշխարհային մամուլի կողմից ամենալուսաբանվածներից մեկը, քանի, որ նա իրոք բազմաշերտ եւ ինքնատիպ անհատականություն է եւ այս գործոնը թե՛ քաղաքական եւ թե՛ այլ նկատառումներից ելնելով չի կարելի անտեսել:

Հավելենք նաև, որ Իրանում տեղի ունեցած հեղափոխությունից հետո, երբ հաստատվեցին կրոնական կարգեր, Գուգուշին արգելեցին ոչ միայն երգել, այլև՝ երկրից դուրս գալ: Երկար տարիներ այդ պայմաններում ապրելուց հետո, 2000 թվականին

նրան վերջապես հաջողվեց մեկնել ԱՄՆ եւ հաստատվել այնտեղ: Եվ չնայած Իրանում ապրող քաղաքացիների գրեթե երկու սերունդ չի տեսել նրան, սակայն ավագ սերնդի կողմից Գուգուշի հանդեպ ունեցած մեծ սերն ու համակրանքը հանգեցրել է նրան, որ բոլոր սերունդներն անգիր երգում են նրա երգերը:

Իսկ անցյալ դարի 70-ականներին Գուգուշը ԽՍՀՄ-ում հայտնի դարձավ պարսիկ ռեժիսոր Փարվիզ Սայադի «Երկար գիշեր» ֆիլմից հետո, որը ցուցադրվեց նաև Հայաստանում:

## Առաջին կիսամյակում Արցախում 1144 երեխա է ծնվել

Արցախի Հանրապետության Արդարադատության նախարարության քաղաքացիական կացության ակտերի գրանցման (ՔԿԱԳ) գործակալության տվյալների համաձայն ընթացիկ տարվա առաջին կիսամյակում Արցախում ծնվել է 1144 երեխա՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 1189-ի փոխարեն:



Այս մասին «Արցախպրես»-ի թղթակցին տեղեկացրել են Արցախի Հանրապետության արդարադատության նախարարության ՔԿԱԳ և նոտարիատի գործակալությունից:

Ամենաշատ ծնունդները գրանցվել է Ստեփանակերտում՝ 477 (նախորդ տարի՝ 487), շրջաններից՝ Մարտակերտում՝ 161, որն համապատասխանում է նախորդ տարվա ցուցանիշի հետ:

Արցախում գրանցվել է ամուսնությունների թվի աճ Արցախի Հանրապետության Արդարադատության նախարարության քաղաքացիական կացության ակտերի գրանցման (ՔԿԱԳ) գործակալության տվյալների համաձայն ընթացիկ տարվա առաջին կիսամյակում Արցախում գրանցվել է թվով 368 ամուսնություն՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 283-ի փոխարեն:

Այս մասին «Արցախպրես»-ի թղթակցին տեղեկացրել են Արցախի Հանրապետության արդարադատության նախարարության ՔԿԱԳ և նոտարիատի գործակալությունից: Ամենաշատ ամուսնությունները գրանցվել է Ստեփանակերտում՝ 142 (նախորդ տարի՝ 86), շրջաններից՝ Մարտակերտում՝ 52 (նախորդ տարվա ցուցանիշը՝ 40):

## Շուշիի Վերին մզկիթի հոգևոր դպրոցի տարածքում հայտնաբերվել է վաղ քրիստոնեական դամբարան-Հուլիսի 7-ին սկսվել են Շուշիի Վերին մզկիթի հոգևոր դպրոցի շենքի վերականգնման աշխատանքները:

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ, 28 հուլիսի, ԱՐՑԱՒԻՂԲԵՏ: Այս մասին «Արցախպրես»-

ի թղթակցի հետ զրույցում ասել է «Պատմական միջավայրի պահպանության պետական ծառայություն» ՊՈԱԿ-ի փոխտնօրեն Նժդեհ Երանյանը:

«Շենքի հիմքերի ամրացման աշխատանքների ընթացքում օրեր առաջ հայտնաբերվել է վաղ քրիստոնեական դամբարան: Դա բացառիկ հայտնագործություն է

բերդաքաղաքում, հերթական փաստը, որ հերքում է Ադրբեջանի պնդումները Շուշիի կառուցման ժամանակաշրջանի վերաբերյալ:



Մեդրեսեի հիմքի ամրակայման աշխատանքների ժամանակ շինարարների կողմից քարեր են նկատվել, որոնք հեռացնելուց հետո հայտնաբերել են կմախք: Աշխատանքներն այդ փուլում դադարեցրել են և այդ մասին տեղեկացրել մեր ծառայությանը: Տեղում վավերացվել է վաղ քրիստոնեական քարարկղային թաղում: Այդ հատվածում շինարարական աշխատանքները դադարեցվել են: Նախատեսվում է ամբողջությամբ պեղել թաղումը, իսկ շինարարական աշխատանքների ավարտից հետո այն հնարավոր է ցուցադրվի նույնությամբ»,- մանրամասնել է Ն. Երանյանը: *Artsakhpress.am*

## Պարծենում էի, որ Այվազովսկու հետնորդն եմ, սակայն խորապես չեի գիտակցում. Անդրեյ Միլլեր



Մոսկվայի հայկական եկեղեցու առաջնորդարանում Ս. Եզրաս արք.Ներսիսյանն օրերս ընդունել է Հովհաննես Այվազովսկու հետնորդներին, ովքեր ապրում են Ավստրալիայում և ՌԴ են ժամանել մեծանուն նկարչի ծննդյան 200-ամյա հոբելյանին նվիրված միջոցառումներին մասնակցելու նպատակով:

armchurch.info-ի փոխանցմամբ, Սրբազան հայրը հյուրերին ուղեկցեց Մուրբ Պայծառակերպություն Մայր տաճար, որտեղ մոմ վառեցին և ծանոթացան Հայ Եկեղեցու պատմությանը: Եզրաս Սրբազանն առանձնակի ջերմությամբ ցույց տվեց իր աշխատասենյակում պահվող Հ.Այվազովսկու բնանկարը՝ նշելով, որ աշխարհահռչակ ծովանկարիչը եղել է մեծ հայասեր և հայկական թեմաներով բազում կտավներ ունի:

«Իմ ծնողներն ասում էին, որ մենք Այվազովսկու հետնորդներն ենք, ես, անշուշտ, պարծենում էի այդ փաստով, սակայն խորապես չեի գիտակցում, թե ինչ է նշանակում լինել նման մարդու ազգականը: Միայն վերջին տարիներին եմ սկսել իմ արմատներով հետաքրքրվել:

Հայկական մշակույթի և ընդհանրապես հայերի հետ առաջին անգամ եմ շփվում: Դա եղավ այստեղ՝ Մոսկվայի հայկական եկեղեցում: Ես շատ ուրախ եմ, որ բացահայտում եմ մի աշխարհ, որի հետ կապված եմ գենետիկորեն, և որի շնորհիվ պիտի դառնամ իմ արմատները»,- հանդիպման ժամանակ իր տպավորություններն է կիսել Անդրեյ Միլլերը: Նշենք, որ հուլիսի 28-ից 30-ը Թեոդոսիայում սկսվում են Մեծ ծովանկարչի ծննդյան 200-ամյակին նվիրված տոնակատարությունները, որոնց Դրիմի հանրապատեության նախագահ Սերգեյ Ակյոնովի հրավերով մասնակցելու է նաև Ռուսաստանի և Նոր Նախիջևանի հայոց թեմի Առաջնորդ Ս.Եզրաս արք.Ներսիսյանը:

2017 թ. ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից հիշարժան տարեթվերի շարքում ընդգրված է Հովհաննես Այվազովսկու հոբելյանը (200-ամյակ): Հայաստանի Ազգային պատկերասրահը ծովանկարչի 200-ամյակի առիթով այս տարվա սեպտեմբերին կազմակերպելու է ցուցահանդես և գիտաժողով:



## Հայ ջութակահար Նիկոլայ Մադոյանը Գինեսի ռեկորդակիր է դարձել



